«Սևանի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոց»

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա – Արժեհամակարգի ձևավորումը սովորողների մեջ՝ պատմության առարկայի գործընթացում

Առարկա – Պատմություն

Հեղինակ – Քրիստինե Հակոբյան

Ուսումնական հաստատություն – Զովաբերի միջնակարգ դպրոց

Ներածություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավականալայն շառավիղով: Առավելը նդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Հայոց պատմությունը առարկան միշտ իրկարևոր ներդրումն է ունեցել հայ մանուկների ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործընթացում:

Հազարամյակներշարունակ մերպատմիչները հաշխատությունները նօգտագործվել են որպես դասագիրք և հայրենասիրական դաստիարակելբազումս երունդների:

Նորս երնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործումը լուրջ անելիքներ ունի հայդպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական ազգային արժեքներով օժտված, ազգային ինկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարել ագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ձյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Ժամանակակից դպրոցի կարևոր ագույն առաքելություններից մեկն է լերեխայի մեջ իրազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մերնախնիներից, և որը մերանխառնինքնատիպությունն է՝ համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Հայ ժողովրդի ավանդույթներում է ,որ վառ կերպ ովարտացոլված են ազգի միասնականությունը, անդրդվելի կամքը, ներքին զորությունները ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը,

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր. 2002

ազգերի պատմության մեջ իր արժանի տեղը ունենալու ձգտումը:

Մեր օրերում հրատապ է անհատի հոգևոր զարգացման հիմնահարցը ազգային մշակույթի արժեքների պահպանման և գալիք սերունդներին փոխանցման համատեքստում:

Մեր հարափոփոխ աշխարհում ինչքան էլ, որ փոխվել են հասարակությունների մտածելակերպը, արժեհամակարգը, վերաբերմունքը ժամանակակից երևույթների և գործընթացների հանդեպ, միևնույն է մատաղ սերնդին պետք է դաստիարակել ազգային արժեքներով ու հերոսական անցյալի օրինակներով:

Արժեհամակարգի ձևավորման գործընթացում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես հումանիտար ոլորտի առարկաները(հայոց լեզու, գրականություն և այլն):

«Հայրենիք մի սպասեք օտարից կամ ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք»:

Գարեգին Նժդեհ

Ամենանվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով պետք է մատուցվի պատմության դասաժամերին: Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հեզական, համբերատար աշխատանք. այն չի ձևավորվում միանգամից. սրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

Աշակերտը պետք է հստակ գիտակցի, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը:

Հայրենասիրությունն ամենաուղղակի առնչությունն ունի ծնողասիրության ու որդեսիրության հետ, և պատմությունն այդ իմաստով լավագույն ուսուցիչը կարող է լինել աշակերտների համար:

Հիմնական մաս

Գլուխ I. Պատմություն առարկայի դերն ու նշանակությունը

Ճիշտ է ասված, որ պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը: Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Նա պատմական ասպարեզ է իջել անհիշելի ժամանակներից և անցել զարգացման բարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: Գալով հազարամյակների խորքից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ: Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների ու դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հասել է մինչև մեր օրերը և ոտք է դնում նոր հազարամյակ՝ վերստին նվաճած իր ազատությամբ իր նորանկախ պետականությամբ և այն պաշտպանելու անսասան վճռականությամբ:

Այսպես, ժամանակների հոլովույթի մեջ է գոյացել մեր ժողովրդի պատմությունը, որը պետք է իմանա յուրաքանչյուր հայ մարդ, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ տարիքից, զբաղմունքից և ապրելու վայրից: Որտեղ էլ որ գտնվենք՝ Հայաստանում թե սփյուռքում, օտարության մեջ, թե հայրենիքում, հայոց պատմությունն իմանալը պետք է բոլորիս, որովհետև այն ունի ճանաչողական և գործնական հսկայական նշանակություն: Նրանում է անթեղված մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության կերպն ու խորհուրդը:

Ուսուցիչըվարպետորեն պետք է կարողանա սովորողներին հասկացնել ու համոցել, որ առանց հայոց պատմության իմացության անհնար է ազգի լիիրավ անդամ կոչվել, որովհետև պատմությունը ոչ միայն ժողովրդի անցած ուղին, այլև նրա միսն ու արյունը, հողն ու ջուրը, նրա կերտածն ու ստեղծածը, նրա ոգին ու հոգեբանությունը, բնավորությունն ու խառնվածքն է:

Հայոց պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա ՀՀ ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը:

Այո, մենք չունենք հերոսների պակաս, ունենք հարուստ մշակույթ, ավանդույթներ: Եվ այս առումով շատ տեղին է հիշել մեր պատմահայր, քերթողահայր Խորենացու խոսքերը.

«Թեպետ մենք փոքր ազգ ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվում»:



Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել և հիմնավորել սովորողի ազգային արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմության դերն ու կարևորությունը, և նրանից դասեր քաղելու անհրաժեշտությունը:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:

Պատմության դասի գլխավոր հատկանիշը և ընդհանրապես պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին, առաջատար փորձին, ուսումնադաստիարակչական գործընթացի օրինաչափություններին:

Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչ էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը, դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինքնուրույնություն:

Շատ կարևոր է դպրոցական խմբակների շրջանակներում, իհարկե նաև դասաժամերին հաճախ անդրադառնալ հայ ազգային հերոսների կերպարներին, նրանց կատարած սխրանքներին, որոնք ավելի կոգևորեն աշակերտներին և կդաստիարակեն հայրենասիրական ոգով:

1. Բաբունսկի Յու. - Աշակերտների դաստիարակությունը, կոմպլեքսային մոտեցում
2. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10-11 դասարան
3. Մուդրիիկ Ա. Վ. Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Եր. 1986թ.

Գլուխ II
Արժեհամակարգի ձևավորումը սովորողների մեջ՝ պատմության առարկայի գործընթացում

Հայոց պատմություն առարկան նպաստում է ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, ազգային և համամարդկային արժեհամակարգ կրող, պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ:

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելով պետք անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մեր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել պատմամշակութային գործիչներին՝ պատմություն կերտողներին կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

8. Դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհին ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

Աշակերտներին անհրաժեշտ է սովորեցնել ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:

Հայոց պատմություն առարկայի դասավանդման նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է:

Դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացման, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, բարություն, ազնվություն, ընկերասիրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը, ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով:

Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ապրելակերպում և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող կարևոր գործոններից է տարիքային գործոնը: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի

մշակույթի որոշակի շերտերը, կենցաղային բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող ամենանվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրության դաստիարակումն է սովորողների շրջանում: Հայկական պետականությանը նետված մարտահրավերները հրատապ են դարձնում հայրենիքի ապագա պաշտպանների պատրաստման խնդիրը: Պատահական չէ, որ պետական մակարդակով խրախուսվում է երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Հայ ժողովուրդը իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի զգացել, որոնց շնորհիվ դիմացել է հազարմյակներին դաժան փորձություններին: Այդ հերոսների կատարած սխրանքների օրինակով մենք կրթում ու դաստիարակում ենք մեր աշակերտներին, որոնք իրենց իդեալն են դարձրել այս կամ այն նվիրյալին:

Խորապես ճշմարիտ է՝ ժամանակն է ծնում հերոսներին: Նույնքան էլ ճշմարիտ է որ ժողովուրդը ապավինելով նրանց, դարեր շարունակ սնվում ու հզորանում է իր արժանի զավակների շուրջ հյուսված հերոսապատումներով: Ազգը, որի պատմական հիշողության մեջ, ինչպես օրգանական ամբողջություն, միահյուսված են քաջ Վարդանի և զորավար Անդրանիկի մերօրյա հնչեղության լեգենդները, վաղուց գտել է հավերժության ճամփա տանող իր ճամփան:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են լսում հատկապես ազատագրական պայքարի նվիրյալների կյանքի ու գործունեության մասին պատմող դրվագները:

Պատմության դասերին է, որ աշակերտները ուսուցչի օգնությամբ բացահայտում են, թե ովքեր են իրենք, ովքեր են իրենց նախնիները, որտեղ են ապրել, ինչ պատմություն ունեն, ինչ ներդրում ունեն հայ մշակույթի բնագավառում:

Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի մոտ: Մեր օրերում էլ կան հերոսական դրվագներ գրելու ու հիշատակելու արժանի և դրա վառ ապացույցը եղավ 44-օրյա պատերազմը, որտեղ հայ զինվորը կրկին անգամ ցույց

տվեց իր քաջությունն ու անձնվիրությունը: Եվ հենց այս տղաների շնորհիվ է, որ հայ ժողովուրդն ապրում է, և միշտ կապրի՝ սերունդներին փոխանցելով իր աննկուն կամքն ու վճռականությունը:

Հայ ժողովուրդը մշտապես ապրել ու արարել է մի տարածաշրջանում, որտեղ միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները: Այս հանգամանքն ավելի կարևոր է դարձրել այս «քաղաքակրթական խաչմերուկներում» ազգային նկարագիրն ու դիմագիծը անաղարտ պահելու հանգամանքը: Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այս խնդրին, քանի որ մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ պետությունների շահերը և յուրաքանչյուր երկիր փորձում է իր կողմը գրավել հայ ժողովրդին: Այս պայմաններում դարձյալ չափազանց կարևոր է առաջ գնալ ազգային ու պետական շահերը առաջնահերթություն ունենալու ճանապարհով և պատմական փորձը ցույց է տալիս, որ ինչպիսի ժամանակաշրջանի ծնունդ էլ լինեն պատմության ընթացքն ուղղորդող անհատները, նրանք միջազգային հարաբերություններում պետք է լինեն զգոն և հավասարակշռված:

Հատկապես փոքր ազգերի ներկայացուցիչները, գտնվելով մեծ տերությունների հետ շախմատային նույն հարթակի վրա, պետք է մտածեն ոչ թե հակամարտելու, այլ առավել շահելու մասին: «Մեծերը» չեն ներում «փոքրերի» ինքնուրույն քայլերը: Այդպես եղել է անցյալում, այդպես է հիմա:

Շատ կարևոր է դպրոցականների շրջանում անդրադառնալ նաև ինքնաճանաչողության հարցերին: Ինքնաճանաչողությունը պարտադիր ենթադրում է երկխոսություն անցյալի հետ, որի ժամանակ անցյալը պետք է դառնա ներկայի մաս:

Ուսման պրոցեսըավելի արդյունավետ դարձնելու համար ուսուցիչը դասի ընթացքում պետք է կիրառի տարբեր մեթոդներ ու հնարներ, որոնք կնպաստեն աշակերտների

արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծմանը: Օրինակ՝ բանավեճի միջոցով սովորողների մոտ ձևավորվում է ինքնուրույն մտածողությունը, դիմացինի կարծիքը հարգելու կարողությունը:

Հայ դպրոցի, առհասարակ յուրաքանչյուր հայ մարդու դաստիարակության կարևորագույն խնդիրն է՝ ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը: Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք ներառի նաև համամարդկային արժեքներ:

Մեր օրերում մեծ տարածում գտած համաշխարհայնացման ճանապարհին կարծես աստիճանաբար վերանում են ազգային արժեքներն ու դիմագիծը, այդ պատճառով հիմա առավել քան երբևէ պետք է անընդհատ աշակերտների հետ զրուցել ազգային արժեքների դերի ու նշանակության մասին, անընդհատ հիշեցնել, թե ովքեր ենք մենք, ինչ փառավոր անցյալ ենք ունեցել և որ մենք պարզապես իրավունք չունենք կորցնելու այն, ինչ մեր նախնիները մեզ են փոխանցել՝ իրենց արյան գնով պայքարելով թշնամու դեմ:

Շատ կարևոր է, որ աշակերտները ուսումնասիրեն ու համոզվեն, որ ժողովուրդը եկվոր չէ, այլ ձևավորվել ու պատմական հազարամյա ուղին անցել է իր բնօրրանում՝ հայկական լեռնաշխարհում:

Սակայն մեզանում կարծես, թե բացակայում է անցյալի հետ բովանդակային խոսույթը: Մեր անցյալի պատմամշակութային ժառանգությունը հիմնականում պահվում է գրադարաններում, մատենադարաններում՝ հիմնականում ուրիշներին ցուցադրելու համար: Մեզանում գերակշռում է անցյալի արժեքների նկատմամբ ձևական մոտեցում: Իսկ մենք, եթե բավարարվում ենք միայն այդ արժեքներին ֆիզիկական գոյությունը փաստելով, ապա դրանք դադարում են արժեքներ լինելուց: Այլ խոսքով՝ արժեքները ոչ միայն պետք է պահպանել, այլև դրանք յուրացնելով ներքինայնացնելով՝ անընդհատ հարստացնել և արդիականացնել:

Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով: Ազգային արվեստի, կենցաղի, խորհրդանիշներին, հայրենի բնաշխարհիյուրահատկությունների, ժողովրդական բանահյուսության հետ ծանոթությունը, հաղորդակցումը նպաստում է սովորողների ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը:

Այո, ազգային դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներն իր մեջ չամփոփած հայը չի կարող լինել իր ազգի

լիարժեք անդամ: Ուստի շատ կարևոր խնդիր է ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը:

Փորձենք հասկանալ, թե ինչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը, հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներին ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու ձևերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, ունենա ազգային ինքնագիտակցություն, ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում, գիտակցի ներկան և ապագան կերտելու հարցում ազգային պատմության դերը, կարևորի ազգային պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն. . .

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքներիհոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

1. «Հայոց ինքնության հիմնահարցեր» Սեյրան Զաքարյան, Երևան 2020թ.
2. Ղուկասյան Ա. Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, էջ 5-6
3. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10-11-րդ դասարաններ

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ

դա հաջողվում է:

Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ, նույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է մի շարք գործոններից.

1. Սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից ու կատարումից
2. Նպատակներից, ինչպես նաև ուսումնադաստիարակչական և զարգացնող խնդիրների լուծումից,
3. Ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից
4. Դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից
5. Սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու՝ պատմության դասերի ուղղվածությունից
6. Դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից
7. Պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից, միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից, որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտական աշխատանքի թեման, այո, շատ կարևոր է և մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար:

Այժմ հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունն ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայոց պետականության գոյությունը, հետևաբար այժմ առավել քան երբևէ պետք ՝ համախմբվել, մեկ միասնական բռունցք դառնալ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը:

Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի և հայոց

պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատրկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ և քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը պայքարել է իր գոյության համար, հաղթել թշնամու բազմաքանակ ու լավ սպառազինված ուժերին, և մանկավարժի կարևորագույն խնդիրներից մեկն է փորձել աշակերտներին բացատրել, որ հաջողության հասնելու գրավականն ամենևին էլ թվական գերակշռություն չէ, այլ նպատակը՝ հանուն որի ելնում են պայքարի: Բարեբախտաբար այսօր մեր երկրում փայլուն սերունդ է մեծանում՝ պահանջատեր, համարձակ և մեր խնդիրն է ուղղորդել, որ նրանք հայրենասեր և հայրենաճանաչ լինեն, քանզի նրանք են մեր ապագան կերտողները, մեր երկիրը շենացնողները: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը սովորողներին հայրենասիրությամբ զինելն է, արժեհամակարգի ձևավորումն է:

Որպես առաջարկություն, կարելի է նշել, որ հանրակրթական և առարկայական չափորոշիչներում, դասագրքերում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել ազգային արժեհամակարգի ձևավորման հարցերին, ավելացնել պատմություն առարկային հատկացվող ժամաքանակները, հնարավորություններ ստեղծվեն դպրոցի աշակերտների հետ հաճախակի կազմակերպել արշավներ դեպի պատմամշակութային վայրեր, որպեսզի նրանք ավելի մոտիկից տեսնեն ու ճանաչեն հայրենիքի ամեն մի պատմական վայրը, նախագծային աշխատանք հանձնարարել, որի ընթացքում սովորողները ինքնուրույն կհետազոտեն ու կբացահայտեն իրենց հայրենիքի պատմության կարևորագույն դրվագները:

Այսօր բոլորս ունենք մեկ կարևորագույն խնդիր՝ համախմբվել և ձեռնամուխ լինել ազգանվեր գործին՝ հայրենիքի փրկությանը:

Չափազանց կարևոր խնդիր է պատմության դասին կիրառել ուսուցման արդունավետ հնարներ և մեթոդներ: Այսօր բորոլս էլ շատ լավ գիտենք, որ աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու շատ քիչ ժամանակ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, ուսուցիչը պետք հնարավորինս փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում

աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Այդ իսկ պատճառով կարելի է օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել դասը:

Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրպանդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռնվեն:

Վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել: Հաճախ ենք լսում արտահայտություններ, որ Google-ն ամեն ինչ գիտի: հետևաբար մեր խնդիրը գիտելիք ունենալը չէ, այլ մտածողության հմտությունները զարգացնելը:

Այսօր էլ հիմնային գիտելիքը ուսուման հիմքն է: Ոչ մի բժիշկ չի կարող բարդ վիրահատություններ անել առանց հիմնային գիտելիքի: Ոչ մի պատմաբան չի կարող վերլուծություններ անել առանց անուններ և թվականներ հիշելու:

Պատմության ուսուցման գործընթացում հանդիպում են տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիարակչական նպատակը:

Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահամանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասերը, զրույց-դասը, գիտելիքներին ստուգման և գնահատման դասը, կրկնության հանրագումարային դասերը, կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողներին ռեֆերատների պաշտպանության դասը, ստուգարքի դասը:

Թվարկվածներիցառավել գործածականը և արդյունավետը, կարծում եմ խառը(համախմբված) դասն է, մանավանդ ցածր և միջին դասարաններում, որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով: Այս դասի ընթացքում գործադրվում են բացատրական-ցուցադրական, դատողական, վերլուծական և այլ եղանակներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր. 2022թ.
2. Բաբանսկի Յու -Աշակերտների դաստիարակությունը, կոմպլեքսային մոտեցում
3. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմությունը 10-11 դասարաններում
4. Մուդրիկ Ա. Վ. - Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Եր. 1986թ.

5. Ղուկասյան Ա. , Հայոց պատմությունը 8-9 դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ
6. «Հայագիտությունը դպրոցում» գիտամեթոդական վելուծական հանդես, Եր 2016-2017թթ.
7. «Հայոց ինքնուրույն հիմնահարցեր» Սեյրան Զաքարյան, Երևան 2020թ.
8. Համացանց

Ցանկ

Անվանաթերթիկ ---------- 1

Ներածություն ---------- 2

Հիմնական մաս, Գլուխ I, պատմության առարկայի դերն ու նշանակությունը ---------- 4

Գլուխ II, արժեհամակարգի ձևավորումը սովորողների մեջ՝ պատմության առարկայի գործընթացում ---------- 7

Եզրակացություններ և առաջարկություններ ---------- 15

Օգտագործված գրականության ցանկ ---------- 18